ԻՐԱԿԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆԻ ԱՆԺԱՄԱՆԱԿ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

ԴԻԱՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Երբեմն նշվում է, որ գրականության մեջ վաղուց ամեն ինչ բացահայտված է և վերլուծված, հետևաբար ամենագլխավորը արդեն գրված է, իսկ նոր, չկրկնվող գործեր չեն կարող ստեղծվել: Սակայն պետք է ասել, որ իրական կյանքի փոփոխություններին զուգահեռ, փոխվում են նաև մարդու աշխարհայացքը, մոտեցումներն ու տեսակետները, ինչը իր ազդեցությունն է թողնում նաև գրականության վրա: Բնական է, որ Հայաստանի անկախացումը նույնպես պետք է իր անդրադարձներն ունենար: Այդ տարիների գրականությունը պատկերում է նորանկախ Հայաստանի իրականությունը, հատկապես՝ հոգևոր-բարոյական կացությունը, բայց միաժամանակ նաև իդեալների ու արժեքների անորոշությունը: Այնուամենայնիվ, կեցության ու հոգեբանության առումով հետաքրքիր է այդ տարիների գրողների ստեղծագործական ընթացքի պատկերը: Նախ՝ հատկանշական է, որ անկախության շրջանում նույնպես առավել ակտիվ էին պոետները, քանի որ պոեզիան ավելի զգայուն է իրականության նկատմամբ ու նաև ավելի օպերատիվ: Անցյալ դարի 90-ական թվականների գրողը անորոշության մեջ էր, քանի որ մի դեպքում փորձում էր հրաժարվել անցյալից, իսկ մյուս դեպքում չուներ վստահություն և հավատ վաղվա օրվա նկատմամբ: Բացի այդ, բանաստեղծությունը, լինելով փոքրածավալ տեքստ, հարմար էր գրողին, քանի որ նա այդ կերպ կարող էր վստահ լինել, որ իր ասելիքը կիսատ չի մնա: Այդ օրերի բանաստեղծության մասին Սեյրան Գրիգորյանը գրում է. «Բանաստեղծը մյուս գրողների և արվեստագետների նման հայտնվեց էապես փոխված իրադրության մեջ: Ամբողջատիրական համակարգի թվացյալ բարիքներն անցան պատմության գիրկը, և զուտ գրական աշխատանքով իր գործն անող բանաստեղծը կանգնեց շփոթեցնող հայտնությունների առջև՝ կորցնելով ոտքի տակի հողը»[1]: Երևույթը դիպուկ է նկատել նաև Արևշատ Ավագյանը՝

Ներկան տխուր է. ապագան՝ անորոշ:
Նոր դարը դեռ ոտքի չի կանգնել,
մարդավարի խոսել չգիտի[2]:

Նման պայմաններում գրված ստեղծագործությունները տարբեր-

[1] **Ս. Գրիգորյան**, Բանասիրություն և բանավեճ, Եր., 2002, էջ 208:
[2] **Ա. Ավագյան**, Սերմացու լույս, Եր., 2004, էջ 132:

վում էին նախորդներից իրենց տարաշերտ թեմայով ու բազմանշանակ բովանդակությամբ, ինչպես նաև հերոսի ընտրությամբ: Անկախության տարիների ստեղծագործությունները աչքի ընկան կյանքի նոր ընկալմամբ, և մինչ այդ տիեզերքի կենտրոնում կանգնած հերոսը, որը կարծես ամեն ինչ գիտեր, հանկարծ փոխարինվեց ինչ-որ փոքր մարդու կերպարով, որն ունի բազմաթիվ խնդիրներ և չունի հենակետ ու ըստ այդմ՝ թափառում է իրականի և երևակայականի խաչմերուկներում: Հեղինակների մեծ մասը ակամա որդեգրեց պոստմոդեռնիստական այդ նոր հերոսին, հետևաբար նաև աշխարհի պոստմոդեռնիստական ընկալման ձևը: Հասմիկ Հակոբյանը նշում է. «Անկախության հաստատումից հետո, երբ գաղափարախոսական խոսքի վրա կառուցված համակարգը անկում ապրեց, և գրականության տարածքը հայտնվեց որոշակի վակուումի մեջ, ուշացումով մեր պոեզիայում սկսվեցին արտահայտվել մոդեռնիստական ու հետմոդեռնիստական ուղղություններ»[3]:

Սակայն նոր կյանքը ամենևին էլ իդեալական չէր, և նոր ժամանակների պոստմոդեռնիստական հերոսն իր հետ բերեց նաև իր լքվածությունն ու դատապարտվածությունը, որոնք այդքան հարազատ էին դառնալու հայ պոեզիային: Իր ապրած ժամանակաշրջանի և իր հուսալքված հասարակության մասին Հուսիկ Արան գրում է.

Հիմա՝ երկրի վրա ու երկնքում, անաշխարհ ու կորած սերունդ,
օրորվում ենք իրական ու անիրականի արանքում՝
մերթ փլատակ ու մերթ փլատակից ելնող բեկոր[4]:

Առհասարակ, պետք է ասել, որ Հուսիկ Արայի պոեզիան աչքի է ընկնում խոհափիլիսոփայական ուղղվածությամբ, սակայն անվերջ մտորումներից ծագած հարցերը մնում են անպատասխան և, կրելով դատապարտվածության էկզիստենցիալիստական իր խաչը՝ պոստմոդեռնիստական հերոսը ստիպված է միայն անվերջ թափառել իրականի և երևակայականի սահմաններին՝ միևնույն ժամանակ բացահայտելով աշխարհի ողջ սարսափն ու ցավը: Լքվածության, ցավի և հոռետեսության միահյուսված զգացումը իր տեղը գտավ նաև Արտեմ Հարությունյանի բանաստեղծություններում.

Թափառում եմ անտես մի աշխարհով,
թափառում երջանկության միջանցքով,
չունենալով երջանկության գրավական,
այն աշխարհից փորձում եմ մտնել այս աշխարհ…[5]

Հարությունյանի բանաստեղծական աշխարհը նույնպես որոշակի փոփոխություն կրեց անկախության շրջանում, և, կարելի է ասել, նրա ստեղծագործությունները վերածվեցին անկեղծ խոստովանություն-մենախոսությունների՝ փիլիսոփայական խոր ընդհանրացումներով, ո-

[3] **Հ. Հակոբյան**, Ժամանակակից հայ պոեզիան (1990-2005 թթ.), ատեն., Եր., 2015, էջ 52:
[4] **Հ. Արա**, Աստծո հետ խոսելու ժամանակը, Եր., 2012, էջ 34:
[5] **Ա. Հարությունյան**, Նամակ Նոյին, Եր., 1997, էջ 34:

րոնք ուղղված էին ժամանակի մարդկային, հասարակական և անգամ քաղաքական ցավալի իրադարձությունները մեկնաբանելուն:

Դատապարտված լինելով թափառումների և, այնուամենայնիվ, փորձելով փրկել մարդկային տեսակը՝ բնական է, որ «նոր ժամանակների» հեղինակը ձգտում էր «ազատվել» իր ժամանակի գորշ իրականությունից, հատել սահմաններն ու դրանով իսկ իր հերոսի համար գտնել երանելի անդորրը, սակայն անորոշությունն ու անիմաստությունը դեռ երկար պետք է թագավորեին, և անկախության շրջանի հեղինակը միայնակ էր. միայն ինքն ու իր որդեգրած հերոսը՝ ճակատագրի դառնության դեմ: Երկրի անկախությունը թվում է, թե գրողին էլ պետք է անկախություն բերեր, սակայն գաղափարի, մտքի ու սրտի ազատություն ընծայելով՝ միևնույն ժամանակ ներքաշեց միայնության շրջան, և մարդը, գրողը մնացին իրենց ճակատագրի, իրենց իմացության, երազների ու ձգտումների, կարեցածի ու չկարեցածի հետ:

Իր միայնության մեջ ամփոփված հերոսը, միահյուսելով իրականի և երևակայականի սահմանները, միևնույն ժամանակ նաև փոխեց հայ բանաստեղծության ժամանակի ընթացքը: Կյանքի զարգացմանը զուգահեռ փոփոխվում էր գրական ստեղծագործությունների տարածաժամանակային ընկալումը, որը հետզհետե ավելի ու ավելի էր տարբերվում դասականից: Աստիճանաբար այդ ընկալումները ձեռք բերեցին ավելի որոշակի դրսևորում, և, ի վերջո, ինչպես հայտնի է, պոստմոդեռնիստական աշխարհընկալման համաձայն՝ ժամանակի միակ միավորը դարձավ տվյալ ներկա պահը, և ըստ այդմ՝ անցյալն ու ապագան միաձուլվեցին ներկային՝ ստեղծելով անվերջ կրկնվող շրջափուլ: Ըստ այդմ՝ պոստմոդեռնիզմը հրաժարվեց ժամանակի գծային ընկալումից՝ ուր անցյալը, ներկան և ապագան հաջորդում են միմյանց, և նախապատվությունը տրվեց հայդեգերյան ժամանակի տեսությանը, ուր ժամանակը դիտարկվում է որպես մեկ ամբողջություն, և անցյալը ներկայի միջոցով փոխակերպվում է ապագայի, և ապագան էլ, իր հերթին, անցյալի: Այս շրջապտույտը ստեղծում է մի փակ շրջան, որտեղ ամեն ինչ վերադառնում է սկզբին: Ժամանակային այս ընկալումը հաստատվեց նաև հայ գրականության մեջ: Այդպես, օրինակ՝ Էդուարդ Հախվերդյանը գրում է.

Եվ մենք քայլեցինք,
Եվ մենք քայլեցինք
Անվերջ Սկզբի ու անվերջ Վերջի
Փակ շրջագծում,
և շրջագիծը փոքրացավ անվերջ…[6]

Ունենալով ժամանակի միայն մեկ միավոր, այն է՝ հարատև ներկան՝ պոստմոդեռնիստական ստեղծագործություններում հերոսի բոլոր ապ-

[6] **Է. Հախվերդյան**, Անառակ որդի, Լոս Անջելես, 1996, էջ 69:

րումներն ու գործողությունները ներկայացվում են տվյալ մեկ ամբողջական ժամանակամիջոցում, որը դիտվում է որպես գործողության կատարման պահ: Ինչպես նշում է Արևշատ Ավագյանը. «Բոլորս էլ ապրում ենք անցյալի ու ապագայի միջնամասում հավերժացած ներկայում»[7]: Հարկ է ասել, որ Ավագյանի բանաստեղծական աշխարհի ժամանակային ընկալումը հենց պոստմոդեռնիստական ժամանակի վառ դրսևորումն է, և այդ հարցին անդրադարձել են որոշ ուսումնասիրողներ: Օրինակ՝ Էդվարդ Միլիտոնյանը գրում է. «Լույսից դեպի մութ ընկած ժամանակի մեջ նա և՛ արթուն է, և՛ քնած, իսկ նինջի և երազի պատկերները և՛ անցյալում են, և՛ ապագայում, և արդեն հայտնի է, որ բանաստեղծի ներկան պարփակում է իր մեջ ողջ ժամանակը»[8]: Համաձայնելով գրականագետի կարծիքին և հաստատելու համար վերը ասվածը՝ բերենք ևս մեկ օրինակ Արևշատ Ավագյանի բանաստեղծություններից.

Ժամանակի հարահոս ու անսպառելի շարժուձևերի մեջ
օրերը, տարիներն ու դարերը օղակելով կապվում են իրար
հավիտենության աներևույթ շղթաներով:
Նրանք անցյալն ու գալիքը, անցողիկն ու մնայունը
ամրակապում են իրար հետ՝
մշտնջենական ներկայի ամբողջության մեջ[9]:

Այսպիսով, նոր հերոսը, ապրելով ժամանակային անվերջ կրկնվող շրջափուլում, զրկված է և՛ առաջխաղացման, և՛ հետընթացի հնարավորությունից, և հեղինակն էլ, իր հերթին, պետք է կառուցի բանաստեղծությունն այնպես, որ բոլոր գործողությունները տեղի ունենան այս պահին՝ որ ակամա ստիպում է հակադրվել ժամանակի դասական գծային շարժմանը: Այս տեսակետից Էդվարդ Միլիտոնյանը ստեղծում է մի հետաքրքիր բանաստեղծություն-գծագիր, ուր ժամանակի կրկնությունը նպաստում է նաև դեպքերի շղթայական կրկնության.

Շրջապտույտ
է
ահեղ ահը
Մահից Մահվան
ահեղ ահն
է է
ահն ահեղ
Մահվան Մահից
ահը ահեղ
է[10]:

---

[7] **Ա. Ավագյան**, Հոգեգույներ ծածկագրերով, Եր., 2011, էջ 52:
[8] **Է. Միլիտոնյան**, Խոսքի ծառ // Նոր-Դար, 2001, թ. 2, էջ 173:
[9] **Ա. Ավագյան**, Աստղալույսերի ձայնը, Եր., 2010, էջ 39:
[10] **Է. Միլիտոնյան**, Մատնահետք, Եր., 2000, էջ 154:

Առհասարակ, Միլիտոնյանի բանաստեղծությունը հաճախ բնորոշվում է «այս պահին» բառակապակցությամբ, և նրա ստեղծագործությունների բանաստեղծական ժամանակը շատ մոտ է պոստմոդեռնիստական ժամանակային ընկալմանը, ինչի հետևանքով Միլիտոնյանի որոշ բանաստեղծություններ ընթերցելիս թվում է, թե ժամանակը հոսում է՝ սկիզբը վերջ անելով և վերջը՝ սկիզբ:

Ժամանակի և իրադարձությունների անվերջ կրկնությամբ ստեղծագործություններում կարող է նաև ամբողջական կամ հատվածական կրկնվել անգամ դարավոր պատմությունը: Օրինակ՝ Խաչիկ Մանուկյանի բանաստեղծություններից մեկում հանդիպում ենք բանաստեղծական խոսքի այնպիսի կառուցման, որը հիմնված է աստվածաշնչյան պատմության կրկնության վրա, և հերոսը ակամա հայտնվում է այդ պատմության կիզակետում.

Գիտեմ՝ կքնեմ ու Տերը կգա,
Ու կողերիցս մեկը կպոկի,
Հետո փութաջան հարություն կտա,
Շաղակրատամոլ էգին անհոգի:
Նորից՝ թռչող օձ, դրախտի վախճան
Ու ծղրտացող կնիկ, էրեխեք,
Թյո՛ւ, էս ի՞նչ արիր իմ կող դավաճան-
Նորից Բաբելոն, նորից Զրհեղեղ…[11]

Երկրում տիրող իրավիճակից ելնելով ևս, թվում էր, որ ժամանակը անընդմեջ պտույտ է գործում, այսինքն՝ դադարեցրել է իր ուղղագիծ ընթացքը և անգամ ավելին՝ հետզհետե կանգ է առնում: Կանգ առած, լճացած ժամանակը դառնում է զարգացման ընթացքը կորցրած երկրի վիճակի խորհրդանիշը: Այսպես ժամանակի վերաբերյալ վերացական թվացող «փիլիսոփայությունը» առարկայանում է իբրև իրական պատկեր, և այդ մասին է, որ Սեյրան Գրիգորյանը գրում է. «Դեռ երեկ պետական պլանով իր գրքերը հրատարակող ու հոնորար ստացող «ազատ» արվեստագետը կարծես միանգամից փոխակերպվեց, դարձավ ցուցարար, գործազուրկ, պատերազմիկ կամ քաղաքական գործիչ»[12]: Այն հանգամանքը, որ, ըստ պոստմոդեռնիստական ընկալման, ներկան ներառում է նաև անցյալն ու ապագան, ներկան վերածում է մի ինքնուրույն և ամբողջական ժամանակային միավորի, որից, սակայն, «փախչելը» բացարձակապես անհնար է: Այս կերպ թվում է նաև, թե երկրում տիրող իրավիճակից այլևս ելք չկա, ինչը իր արտահայտությունն է գտնում հատկապես բանաստեղծական տողերում: Հովիկ Հովեյանը գրում է.

---

[11] **Խ. Մանուկյան**, Էն աշխարհը չի, Եր., 2010, էջ 6:
[12] http://www.grakantert.am/ժամանակակից-հայ-պոեզիայի-ներկան-հատվ-2/

Հայաստանի ժամանակը մնացել է
Ավերակների կոկորդում:
Փնտրտուքը մականուն չունի…
Հեթանոս երգերն այլևս
Չվաճառվող շուջուխ են Աշտարակի…
Զբոսաշրջիկ - քամու ապաբախտ քիմքը մոլորվել է
Անժամանակության այս ծփանքի մեջ,
Իսկ ժամանակը շարունակում է մնալ կոկորդում
Մեր ավերակների…[13]

Անժամանակության խնդիրը Հովեյանի պոեզիայում այս կերպ ստանում է քաղաքական ու սոցիալական ենթատեքստ:

Բերված մի քանի օրինակներն ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ ժամանակային ըմբռնման փոփոխությունը ինքնանպատակ չէ և բանաստեղծության մեջ միջոց է դառնում իրականության որոշ կողմերի արտացոլման:

Կարևոր է նաև ասել, որ հայ բանաստեղծները միայն հետանկախության շրջանում հնարավորություն ստացան արտահայտելու իրենց մտքերն ու զգացումները պոստմոդեռնիստական աշխարհընկալման տեսանկյունից: Գուցե հենց պարտադրվող գաղափարախոսության բացակայությունն էր պատճառը, որ անկախության շրջանի պոետներին դրդեց ազատվել կապանքներից, բացել չակերտներն ու նախապատվությունը տալ համաշխարհային գրականության մեջ մինչ այդ բազում անգամներ հանդիպող պոստմոդեռնիստական ժամանակային ընկալմանը: 1990-ականների բանաստեղծը չուներ ապագայի զգացողություն ու ապագայի հանդեպ հավատ, ինչպես նաև փորձելով նորաբար երևալ՝ ձգտում էր ազատվել խորհրդային անցյալից և, հետևաբար, մնում էր միայն հարատև ներկան:

Այս տեսակետը, հակադրվելով ժամանակի դասական ընկալմանը, լայն առումով փոխում է նաև պատկերացումներն արվեստի բովանդակության մասին: Ի հակադրություն հեգելյան փիլիսոփայության, ըստ որի՝ արվեստը կամ պոեզիան անցյալի կամ արդեն կատարվածի մասին է, պոստմոդեռնիստական փիլիսոփայությունը ունի այլ խնդիր, այն է՝ ձևավորել նոր աշխարհընկալում, ուր կարևորվում է առօրեականը, և արվեստն էլ, իր հերթին, միտված է «այստեղ» և «հիմա», այս պահին կատարվող գործողություններն ու ապրումները ներկայացնելուն:

Հաշվի առնելով անորոշության զգացողությունը՝ բանաստեղծին մնում էր միայն իր հերոսին բնակեցնել իր կառուցած անվերջ կրկնվող ներկայում, որին կամա թե ակամա ստիպված ես համակերպվել: Վարդան Հակոբյանը գրում է.

---

[13] **Հ. Հովեյան**, Վրիպած ջրհեղեղ, Եր., 2014, էջ 53:

Ժամանակը հիմա «այժմ է»,
երկու դար հետո ապրողի համար ևս այն
կլինի «այժմ», իսկ
դա նշանակում է, որ ժամանակը միշտ «այժմ է»:
Ես այնքան հույսեր էի կապում վաղվա հետ,
մինչդեռ պարզվում է, որ
ժամանակի մեջ «վաղը» գոյություն չունի[14]:

Վարդան Հակոբյանի պոեզիայում հուզականն ու զգացմունքայինը բավականին ընդգծված են հանդես գալիս: Ըստ այդմ՝ թվում է, որ բանաստեղծը աշխարհը տեսնում է միանգամայն այլ տեսանկյունով, ուր կյանքի ու ժամանակի համայնապատկերը ներկայացվում է իբրև տիեզերական քաոսի մի խառնարան: Հաշվի չառնելով ժամանակի մասին դասական պատկերացումները՝ Հակոբյանը ևս իր հերոսին թողնում է փակ շրջանում, և սակայն, կարևոր է ասել, որ ինքը՝ պոստմոդեռնիստական հերոսը, ևս գիտակցում է, որ ժամանակային այդ փակ շրջանից ելք չկա, որովհետև անհնար է կանգնեցնել և կամ դուրս պրծնել պոստմոդեռնիստական ժամանակի որոգայթից: Լաբիրինթոսում պարփակված լինելը, որոշակի խորհրդավորություն է հաղորդում բանաստեղծություններին և ընթերցողին էլ դրդում է անվերջ մտորումների, քանի որ գալիս է մի պահ, որ արդեն պարզ չէ հերոսը շրջանի ո՞ր հատվածում է, հե՞տ է գնում, թե՞ առաջ և կամ առհասարակ որտեղի՞ց է սկսել: Վերապրելով այդ զգացումները՝ Արմեն Շեկոյանը գրում է.

Փակուղու մեջ ենք. էլ չունենք մենք ելք:
Ժամանակն անցավ. էլ չունենք մենք վախտ:
Մենք չենք բողոքում՝ որ չտվին խելք:
Մենք բողոքում ենք՝ որ չտվին բախտ[15]:

Արմեն Շեկոյանի բանաստեղծական արտահայտչամիջոցները վերարտադրում են հեղինակի ներաշխարհի ապրումներն ու զգացողությունները և ոչ միայն հեղինակի, այլև իր ժամանակի հասարակության, որը պոստմոդեռնիստական հերոսի նմանությամբ փակված է լաբիրինթոսում: Այդ տարիների հասարակությունը բնորոշելու համար առավել հարմար կհնչեն Էրիխ Ֆրոմի հետևյալ տողերը. «Մեր հասարակությունը մշտապես դժբախտ մարդկանց հասարակություն է, որոնք տառապում են վախից և միայնությունից, որոնք ստորացված են և միևնույն ժամանակ կախման մեջ, որոնք ընդունակ են ոչնչացնելու և կարող են երջանկանալ միայն այն բանից, որ իրենց հաջողվել է «սպանել ժամանակը», որն, ի դեպ, իրենք մշտապես ձգտում են խնայել»[16]:

Սակայն երբեմն բանաստեղծություններում երևում է հույսի վերջին նշույլը, հուսահատ ինքնախաբեություն-փորձը, ըստ որի՝ հերոսին

---

[14] **Վ. Հակոբյան**, Երգը որպես հանդիպման վայր, Ստեփանակերտ, 2009, էջ 113:
[15] **Ա. Շեկոյան**, Թուղթ ու գիր, Եր., 1990, էջ 223:
[16] **Фромм Э**. Иметь или быть. М., 2000, с. 215.

հնարավոր է դուրս բերել լաբիրինթոսից: Այդպես, օրինակ՝ մեկ այլ բանաստեղծության մեջ Շեկոյանը գրում է.

Ես դեգերելով շարունակվեցի երկիր հորջորջվող լաբիրինթոսում:
Շարունակվում եմ անվերջ ու հոսում անանցանելի ու մութ էս փոսում:
Շարունակվում եմ էս անլույս մթնում. քչփորում եմ,
բայց ելքը չեմ գտնում[17]:

Բանաստեղծը, այսպիսով, չհաշտվելով իրականության հետ, փորձում է գործադրել իր վերջին հույսն ու ձգտումները և կոտրել շրջանն ու դուրս բերել հերոսին ժամանակային այդ լաբիրինթոսից: Դրանով իսկ Շեկոյանը և առհասարակ ժամանակակից բազում այլ հեղինակներ ձգտում են գտնել հույսի մի շող, որը կվկայեր իրենց ժամանակի խավարի կործանման և լուսավոր ապագայի հաստատման մասին, որին հասնելու համար հարկավոր է միայն առաջ շարժվել: Այսինքն՝ արտաքին աշխարհի իրադարձությունները ստիպում են հեղինակին փրկություն և շարժում փնտրել գրական աշխարհում, սակայն այստեղ էլ սպասում է հերթական հիասթափությունը, և այս ջանքերն էլ ապարդյուն անցան. չէ՞ որ պոստմոդեռնիստական շարժումը միմիայն թվացյալ է: Հենրիկ Էդոյանը գրում է.

Նույնն են ջանքերը, բայց տարբեր են նրանց արձագանքները-
առավոտ, կեսօր, երեկո և ասես հավերժը շարժվում է,
բայց նաև չի շարժվում,
աշխարհը պտտվում է, բայց օրը նույնն է մնում…[18]

Ժամանակակից բանաստեղծը ապրում է այնպիսի ժամանակաշրջանում, ուր շարժումը և պայքարը ձևավորում են հեղինակի անհատականությունը, բայց և արտահայտում են համակարգի ներսում ընթացող հակասությունների միասնությունը: Ճիշտ է, դեռևս նախորդ դարի 70-80-ականների պոեզիայում արդեն երևում էր ներքին պառակտման միտումը, սակայն որպես լիարժեք և լիովին նոր աշխարհաճանաչողական համակարգ այն ձևավորվեց միայն 90-ականներին և լայն առումով տասնամյակից ավելի տևող նորարարական շարժումը, անցում կատարելով նոր՝ պոստմոդեռնիստական փուլ, կանգ առավ և հետագա ընթացքը միմիայն թվացյալ բնույթ կրեց: Բանաստեղծություններում ևս թվում է, թե հերոսները գնում են առաջ՝ ոչ մի սանտիմետր չնահանջելով, սակայն ինչ-որ պահի հասնում են այնտեղ, որտեղից սկսել են՝ այդպես էլ չհասկանալով՝ ե՞րբ սկսեցին նահանջել: Հավելենք, որ վերը նշված երևույթը իր վառ արտահայտությունը գտավ հատկապես Հովհաննես Գրիգորյանի ստեղծագործություններում.

-Շարժվեցի՛նք,- բազմանշանակ ասաց տանտերն ու շուրթերին
տարավ բաժակը, որը լցված էր օղիով դեռևս տարիներ առաջ:

---

[17] **Ա. Շեկոյան**, Երևան հյուրանոց, Եր., 2003, էջ 283:
[18] **Հ. Էդոյան**, Երեք օր առանց ժամանակի, Եր., 2005, էջ 38:

-Շարժվեցի՛նք,- կրկնեց բազմանդամ ընտանիքը,
չկտրելով հայացքը ճանճի խոտորուն թռիչքից:
-Շարժվեցի՛նք,- կտրուկ ոտի թռավ թղթակիցն ու
հրաժեշտի համար համբուրեց տատի հնամենի
ճակատն ու չանթելով վարունգի բանկան սեղանից՝
իրեն դուրս նետեց ճիշտ այն պահին, երբ հետզհետե
արագություն հավաքելով, ուր որ է, վագոնը
շարունակելու էր կանգնած մնալ իր տեղում[19]:

Այսպիսով, ներկայի միջով անցյալից դեպի ապագա և ապագայից դեպի անցյալ կրկնությունն անխուսափելի է, և այդ անհուսության լաբիրինթոսում է ապրում նաև Հովհաննես Գրիգորյանի հերոսը, և բանաստեղծական տողերում ցայտուն գծագրվում է մեկ անվերջ օրվա մետաֆորը: Այս առումով պետք է համաձայնենք Սերգեյ Աթաբեկյանի հետևյալ դիտարկմանը. «Իրական ժամանակը խախտում-ծվարում է մեկ օրվա տարածքում, այսինքն՝ իր ապրած կյանքն ու ճանաչած աշխարհը, իբրև ժամանակ, ճակատագիր ու տարածություն ներսուզվում են օր մետաֆոր-սիմվոլի շերտեր, որոնց խտությունը բնութագրելու առումով խիստ հարմար է Բախտինի «քրոնոտոպ» տերմինը՝ ժամանակի ու տարածության համաչափ փոխակերպման անտրոհելի միասնության պատկերը»[20]: Ժամանակային շրջափուլում փակված լինելը կրկին հանգեցնում է հերոսի միայնության և հուսալքության, որի հետևանքով ծնվում է համակերպվածության զգացումը: Օրինակ՝ իր բանաստեղծություններից մեկում Հ. Գրիգորյանը գրում է.

….ամենադժվարն առաջին հազար տարին է,
հետո ամեն ինչ դառնում է սովորական,
հետո սկսում է կրկնվել անվերջ՝
առավոտյան, կեսօրին, երեկոյան…[21]

Իհարկե, ժամանակի շրջանաձև պտույտի գաղափարը տարբեր բանաստեղծներ արտահայտում են ոճի և պատկերավորության տարբեր միջոցներով, ոմանք՝ իբրև զուտ փիլիսոփայություն, ոմանք՝ իբրև կյանքի պատկեր, բայց դա արդեն բանաստեղծական անհատականության խնդիր է:

Եզրափակելով մեր խոսքը ժամանակակից հայ բանաստեղծության մեջ պոստմոդեռնիստական ժամանակային դրսևորման, ինչպես նաև իրականի և երևակայականի չտարանջատվածության մասին՝ հավելենք, որ պոստմոդեռնիստական հերոսի՝ ժամանակի և իրականության ոչ դասական ընկալումը լայն տարածում ստացավ հայ պոեզիայում և անցյալի ու ապագայի միջև հավերժացած և մի քանի իրակա-

---

[19] **Հ. Գրիգորյան**, Գիշերահավասար, Եր., 2006, էջ 275:

[20] **Ս. Աթաբեկյան**, Հ. Գրիգորյանի բանաստեղծության բաց գաղտնիքները // Գարուն, 1995, թ. 2, էջ 54:

[21] **Հ. Գրիգորյան**, Հրեշտակներ մանկության երկնքից, Եր., 1992, էջ 18:

նություններ միավորող ներկան հոգեհարազատ դարձավ բանաստեղծների մեծամասնությանը: Մեր կարծիքով, հիմնական պատճառը թելադրված էր այդ տարիներին երկրում տիրող անելանելի կացությամբ, որը բանտարկում էր մարդուն անծայր լաբիրինթոսում, որի հետևանքով, ինչպես նշում է Ֆիցջերալդը. «…Մենք լողում ենք առաջ, հոսանքին ընդդեմ, բայց այն շարունակ հրում է մեր նավակները ետ՝ դեպի անցյալի գիրկը…»[22]:

Բանալի բառեր – *պոստմոդեռնիզմ, իրականության և երևակայականի չտարանջատվածություն, նոր հերոսի ընտրություն, միայնություն, լաբիրինթոս, ժամանակային շրջափուլ, հարատև ներկա, թվացյալ շարժում*

ДИАНА МНАЦАКАНЯН – ***На вневременных перекрёстках реального и воображаемого.*** – В статье рассматриваются некоторые характерные черты постмодернистского мировоззрения, такие, как нарушение временн***о***го континуума и отсутствие границ между реальным и воображаемым. Эти новые черты отчётливо заметны в армянской поэзии периода независимости. Поэзии 90-х годов свойственны постмодернистская хаотичность и неопределённость, а лирический герой находится, как правило, в некоем лабиринте между реальным и воображаемым; единственным временн***ы***м измерением в этом лабиринте является настоящее. В силу указанных качеств, отчасти обусловленных окружающей действительностью, стихи поэтов-постмодернистов производят сильное эмоциональное впечатление, заставляя читателя задуматься о жизни.

Ключевые слова: *постмодернизм, неразъединенность реального и воображаемого, выбор нового героя, одиночество, лабиринт, временной цикл, постоянное настоящее, кажущееся движение*

DIANA MNATSAKANYAN – ***At Untimely Crossroads of the Real and the Unreal.*** – In the following article, some elements typical to postmodern life-perception such as temporal violation and absence of border between the real and the unreal manifestation of the independence period Armenian poetry are observed. While observing it becomes clear that poetry of 90's characterized by postmodernism's chaos and uncertainty and poem's hero, as a rule, is situated between the real and the imagined in the closed maze, where the only period of time is permanent present. Due to the mentioned above postmodern ideology's features typical, which are partly caused by those year's reality, the works make strong emotive impression making the reader think endlessly.

Key words: *postmodernism, non-differentiation between reality and imagination, choice of a new hero, loneliness, maze, time circle, permanent present, seeming movement*

[22] **Ս. Ֆիցջերալդ**, Մեծն Գեթսբին, Եր., 2014, էջ 216: